

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ^(*)

(Աւիրաք, Էլեաք, Թոռուն, միր, բեգ, աղա, ֆօլարի, րաեաք)

Եւրոպական մտքով «Դասակարգային բաժանմունքի» մասին, ի հարկէ կարելի չէ խօսիլ քիւրդերու նկատմամբ ալ :

Հստ այժմայ Բիւրդերու՝ իրենք կը բաժնուին երեքի, Սաադաք, Աւիրաք, Բաեաք :

«Սաադաք» . Ասոնք իրենց կը համարեն արարական ծագումէ ու Մարգարէի ցեղէն, ու իրենք չը հաշուելով Բիւրդ, կը պահեն պաշտօնական քրդութիւն : Բիւրդերու կենցաղի մէջ անոնք ունին ըստ էութեան՝ հոգեւորականի դեր (Շըխու-թիւն) . իսկ ըստ սովորութեան՝ կ'զբաղին նաեւ անոնց աշխարհիկ կեանքով ալ : Բացառութիւն կը կազմեն այն չէյսերը՝ որոնք քիւրդ են . բայց Սաադաթ չեն :

Աւիրաք .— Քրդական այն ցեղապետութիւններն են, որոնք ցեղի անունով ընդարձակ տարածութիւններու վրայ կը տիրեն սար ու ձորի, մարգերու ու վարելահողերու . կը վարեն խաշնարած ժողովուրդի կեանք, ու պահելով ձիերու երամակներ՝ իրենց գլխաւոր զբաղմունքն է ձիախաղ ու զինախաղ : Աշիրաթ կը նշանակէ ֆաշաց ցեղ, ինչ որ հիներու մէջ վիւսապաշունքն էր :

Աշիրաթական բաժանումներն են .

Էլեաք .— Աշիրաթութեան այն ճիւղը, որ մաս մաս բաժանումով կազմուած է, իսկ միացած Աշիրաթութեան մէջ :

Թոռուն .— Թոռուն կը կոչուին այն ազնուականները, որոնք իրենց մեծութեան ժառանգական անունն ու դիրքը կը պահեն . կարելի է ասոնց անուանել «Բիւրդ պաշտօնական եւ անպաշտօն ազնուականութիւն» :

(*) Կէս դար առաջ՝ ըստ Ալէքսանտր ժապայի (Ռուս հեւապտոս) քիւրդ-գրագէտ Մահմուտ էֆ.իի, Տաճկաստանի մէջ քիւրդերը կը կազմուէին հետեւեալ բաժանումներով :

Աւիրէ, Գապիլէ, Թայիթէ, Խանէ, Քօլարի, Էֆիննի :